



10:27 04/06/2012 » ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

# Գիտաժողով ԵՊՀ-ում՝ «Հայաստանի անվտանգությունը տարածաշրջանային ռազմաքաղաքական գործընթացների համատեքստում» խորագրով

Այսօր Երևանի պետական համալսարանի գիտխորհրդի դահլիճում տեղի կունենա «Հայաստանի անվտանգությունը տարածաշրջանային ռազմաքաղաքական գործընթացների համատեքստում» խորագրով հանրապետական գիտաժողով:

Գիտաժողովի ժամանակ իրենց զեկույցներով հանդես կգան ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի Ռազմավարական հետազոտությունների բաժնի

աշխատակիցները, ինչպես նաև ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության, ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի, ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի և «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի ներկայացուցիչները:

Այս մասին հայտնում են ԵՊՀ-ի մամուլի ծառայությունից:

Աղբյուր՝ Panorama.am